

ԵՂԻՇԵԻ «ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՆԵՐԱԶՄԻՆ»
ԵՐԿԻ ՎԿԱՅԱԿՈՉՈՒՄՆԵՐԸ

Բանասիր. գիտ. քեկնածու Ա. Ս. ԶՆՅՔՈՒՆՅԱՆ

Հայոց այբուբենի ստեղծման պատմությունը մեզ ավանդող հեղինակները՝ Կորյունը, Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին հաստատում են, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը կատարվել է 2 անգամ. 1. ասորերենից և մասնակիորեն հունարենից, 2. հունարենից։ Նշանակում է, Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը եթե շունի խմբագրություններ, ապա գոնե պիտի ունենա շերտեր։ Եթե այդ շերտերը ձեռագիր օրինակներում աստիճանաբար համահարթված են, միօրինակացված եկեղեցական հայրերի կողմից, ապա հայ հին հեղինակների աստվածաշնչային վկայակոչումները այն ակունքներն են, որոնք համեմատաբար անաղարտ են մնացել և մեզ են հաղորդում Աստվածաշնչի հայերեն թարգմանության կամ թարգմանությունների վաղնջական վիճակը։ Միայն անհրաժեշտ է հայ պատմիչների, մեկնիչների մեզ հասած երկերից քաղել այդ հատվածները, համեմատել այսօրվա բնագրերի հետ, ղգուշությամբ տարբերել նախնականն ու հետսամուտը և, ամենակարևորը, փնտրել-դտնել, թե Աստվածաշնչի բնագրից շեղվող կամ դրա հետ նույնական վկայակոչումները ինչ բնօրինակ կամ խմբագրություն են ունեցել իբրև հիմք։ Այս խնդրի կարևորությունն ընդգծել են հին ու նոր սերնդի հայ և օտար գիտնականներ, որոնց աշխատություններում, սակայն, վկայակոչումները համեմատվել են հիմնականում տուրքի Աստվածաշնչի (ուրեմն՝ մեկ ձեռագրի) ընձեռած տվյալների հետ, ուսումնասիրությունները կատարվել են մեկ հեղինակի կատարած վկայակոչումների շուրջ, հայերեն վկայակոչումները այլ լեզվով դրված բնագրերի հետ համեմատելիս համեմատելի եզր է ընդունվել կամ միայն հունարենը, կամ միայն ասորերենը։

Այստեղ մենք կփորձենք տալ միայն Եղիշեի հրկի վկայակոչումների վերլուծությունը՝ ընդգրկելով դրանց հնարավոր բոլոր աղբյուրները։ Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկում օգտագործված է աստվածաշնչային 62 վկայակոչում¹, որոնք հիմնականում բաժանվում են շորս խմբի.

1. Ամբողջական նախադասություն, որը ճշտությամբ համապատասխանում է քաղաքացիություն ստացած, օրինականացված Աստվածաշնչի բնագրին (Զոհրաբյան հրատարակություն)։

2. Վկայակոչում, ուր մասնակի շեղում կա աղբյուրից։

3. Երկու-երեք բառից կազմված արտահայտությունների, բառակապակցությունների օգտագործում։

¹ Եղիշեի 1957 թ. քննական հրատարակության և վերջինիս հիման վրա կատարված ուսման թարգմանության տողատակերում ցույց է տրված 25 վկայակոչում իրենց 37 աղբյուրներով։ Մենք բացահայտել ենք ևս 37 վկայակոչում իրենց 76 աղբյուրներով։

4. Որեւէ մտքի կամ դեպքի վերապատմում, ուր հաճախ անտեսվում են աղբյուրի մեջ օգտագործված բառերը կամ բառակապակցությունները:

Մենք այստեղ կանգնադառնանք միայն երկրորդ կետին վերաբերող օրինակներին, որոնք վկայակոչումների ու աղբյուրների տարբերության բնույթից խլնվում, կարելի է բաժանել երեք խմբի.

ա. վկայակոչումներ, որոնք տարբերվելով զրաբար բնօրինակից, միտում են հունարեն Յոթանասնից բնագրին:

բ. վկայակոչումներ, որոնք տարբերվում են և՛ հունարեն, և՛ զրաբար բնագրերից:

գ. վկայակոչումներ, ուր հեղինակը միջամուխ է եղել նախադասությունների կառուցվածքին:

Երբեմն այս խմբերից յուրաքանչյուրին բնորոշ հատկանիշները մասնակիորեն ի հայտ են գալիս նաև մյուս խմբերում, այսինքն այդ խմբերի առանձնահատկությունները խաչաձևվում են:

Ա. Աստվածաշնչի հայերեն թարգմանության, նրա բնօրինակի, շերտերի ու ժամանակի հարցերը լուծելիս ուսումնասիրողին որոշ նյութեր կարող են մատակարարել այն վկայակոչումները, որոնք նույնական չեն իրենց հայերեն աղբյուրի հետ: Այսպես.

Օրհնեցից զտէր յամենայն ժամ, Օրհնեցից զտէր յամենայն ժամ, հանապազ օրհնութիւն նորա ի բերան յամենայն ժամ օրհնութիւն նորա ի իմ: Ի տէր պարծեսցի անձն իմ, լուի- բերան իմ: Ի տէր պարծեսցի անձն ցեն հեզք եւ ուրախ եղիցին: 177/16- իմ, լուիցեն հեզք եւ ուրախ եղիցին: Սաղմոս, 139, 2—3

Հայերեն Սաղմոսարանի 17 գլխի 2-րդ տան յամենայն ժամ—ը կրկընվում է, մինչդեռ Եղիշեի մոտ մի դեպքում օգտագործված է յամենայն ժամ, իսկ երկրորդ դեպքում՝ հանապազ: Դիմենք հունարեն Յոթանասնից բնագրին. «Ὁ ὁσιώτατος τὸν Κύριον ἐν παντί χαίρω, διὰ παντός ἡ ἀνέστη: αὐτὸς ἐν τῷ στωματί μου»: Հունարենում համադասական նախադասության առաջին եզրն ունի ἐν παντί χαίρω (բոլոր ժամանակներում՝ յամենայն ժամ), իսկ երկրորդում՝ διὰ παντός (միշտ, անընդհատ՝ հանապազ): Նույն երևույթը նկատում ենք ասորերեն (ըստ նրա անգլերեն թարգմանության² համապատասխանաբար at all times & continually), լատիներեն (in omni tempore & semper) բնագրերում: Նշանակում է ունենք նույն հատվածի երկու տարբեր թարգմանություն, որոնցից մեկը (այն պայմանականորեն կոչենք Եղիշեին), շեղվելով հայերեն բնօրինակից, հարապատ է հունարեն, ասորերեն, լատիներեն բնագրերին³:

Հունարենի «... αὐτὸς με ὁσιώτατον καὶ ἡγαστόν με εἰς ὅρος ἀγίου σου, καὶ εἰς τὰ πνεύματα σου» (Սաղմոս, 101, 3) նախադասությունը գրաբար բնագրում

² Այս և հետագա թվանշանների ձախ կողմինը ցույց է տալիս Եղիշեի երկի 1957 թ. քննական ծանոթարկության էջը, իսկ աջ կողմինը՝ տողը:

³ The Holy Bible..., Translated from the Peshitta... by George M. Lamsa, Philadelphia, nineteenth printing:

⁴ Ըստ Ն. Տեր-Մինասյանի կազմած քննական բնագրի, երեք ձեռագիր (Մաշտոցի անվ. Մատենադարան, № 1386, 6196 և Վենետիկի № 48) հանապազ-ի փոխարեն ունեն յամենայն ժամ: Դա բացատրելի է գրիչների՝ Ս. Գրքին հարադատ մնալու ձգտումով: Նկատի ունենանք, որ այդ երեք ձեռագրերից երկուսը (№ 6196 և № 48) ձառնարկ են:

վերածվել է «...զի առաջնորդեսցեն ինձ, հանցեն զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս քո»։ Եղիշեի երկում այս հատվածը վկայակոչված է «...զի նոքա առաջնորդեսցեն եւ ածցեն զմեզ ի լեառն սուրբ եւ ի յարկս քո» (149/5)։ Հունարենի չիճաչոս-ի դիմաց գրաբար Սաղմոսարանն ունի հանցեն, իսկ Եղիշեն՝ ածցեն⁵։ Հունարեն նույն բառը երկու տարբեր երկերում թարգմանված է տարբեր բառերով։ չիճաչոս-ի բայական արմատը՝ աչա-ն ունի առաջնորդել, տանել, բերել, հասցնել, զբաղվել, արտադրել, հաշվել, արժեքավորել, ներհանել, պատճառել, ապրել, անեցնել, դաստիարակել, գլուխ հանել իմաստները, հետևաբար Եղիշեի վկայակոչումի ածցեն-ը, տարբերվելով գրաբարյան հանցեն-ից, ավելի մոտ է հունարեն բնագրի օգտագործած չիճաչոս-ին։

Եվս մեկ առադրություն.

Ահա շրջեցան զինեւ շունք բազումք Եւ ժողովք շարաց պաշարեցին զիս. Եւ ժողովք շարաց պաշարեցին զիս։ Ժակեցին զոտս իմ եւ զծեռս իմ եւ Ծակեցին զծեռս իմ եւ զոտս իմ եւ փոխանակ բերանոյ իմոյ աղաղակեցին ամենայն ոսկերք իմ։ 168/21 Սաղմոս, ԻԱ, 17—18

Եղիշեի վկայակոչումի մեջ ունենք շրջեցան՝ գրաբար բնագրի հարադիր շուրջ եղեն բաշի փոխարեն։ Հունարեն բնագիրը (ինչպես նաև Եղիշեի վկայակոչումը) ունի ἐξουλασσαν պարզ բայը։ Ավելին. գրաբար բնագրում ղեղշվել է հունարենի ὠ- բառը, որը, սակայն, առկա է Եղիշեի վկայակոչումի մեջ ի դեմս ահա-ի։ Առադրված այս հատվածների երրորդ տարբերությունն այն է, որ Եղիշեի «եւ փոխանակ բերանոյ իմոյ աղաղակեցին ամենայն ոսկերք իմ» նախադասությունը տարբերվում է և՛ գրաբար, և՛ հունարեն բնագրերից։ Գրաբար «Թուեցին զամենայն ոսկերս իմ»-ը նույնությամբ համընկնում է հուն. «ἐξουλασσαν παντα τα ὠστα μου»-ին։ 'Էճիճիճիճի-ն հունարենում ունի հաշվեցին, թվեցին իմաստը, և Եղիշեի աղաղակեցին-ը չի ծածկում հունարենի ἐξουλασσαν-ն։ Եղիշեի աղբյուրը չի կարող լինել նաև ասորերեն բնագիրը, ուր ունենք հունարենից (հետևաբար և գրաբարից) շեղված բնագիր. «Չարությունից (անարդարությունից) դրդված շրջապատեցին ինձ։ Տարբեր չարիքներ պաշարեցին ինձ։ Նրանք ծակեցին իմ ձեռքերն ու իմ ոտքերը։ Իմ ոսկորները ցավում էին վշտից»⁶։

Եղիշեի երկի 151-րդ էջում վկայակոչված է Սաղմոսներից մի հատված.

Ի բերանոյ մանկանց տղայոց ըս- Ի բերանոյ մանկանց տղայոց ըս- տընդիացաց հաստատեցեւ զօրհնութիւն, տընդիեցաց կատարեսցի օրհնութիւն, թիւն, զի եղծցի թշնամին եւ հակա- զի եղծցին թշնամին եւ հակառակորդն։ 151/7 կորդն։ Սաղմոս, Ը, 3

Սաղմոս, Ը, 2-րդ տունը նույնությամբ բերված է «Վասն Վարդանայ...» երկում, բայց ահա Զոհրաբյան և Բագրատունյան հրատարակությունների 3-րդ տան կատարեսցի-ն փոխարինված է հաստատեցեւ-ով (կատարեսցի-ի

⁵ Եղիշեի երկը պարունակող միայն երկու ձեռագիր (Բ և Ձ) ունեն հանցեն։ Թարգմանությունն ըստ վերոհիշյալ The Holy Bible գրքի։

փոխարեն հաստատեցեր ունեն նաև 1666, 1705, 1733, 1817, 1895, 1929 թթ. հրատարակությունները): Նկատի առնենք, որ Սաղմոսաց գրքի այս «Ի բերանոյ մանկանց տղայոց ստրնդիեցաց կատարեսցի օրհնութիւն»-ը աննշան փոփոխությամբ տեղավորված է նաև Մատթևոս, ԻԱ, 16. «Ի բերանոյ տղայոց ստրնդիեցաց կատարեսցեր զօրհնութիւն» (Ի դեպ և՛ Սաղմ. Ը, 3-ի զրաբար թարգմանության, և՛ Եղիշեի վկայակոչումի մեջ, չգիտես ինչու, անտեսվել է այս տան «եւ» շաղկապը, չնայած այն կա և՛ հունարեն բնագրում, և՛ Մատթևոսի ԻԱ, 16 տան զրաբար թարգմանության մեջ), որտեղ պահպանված է կատարեսցեր բայը: Սաղմ. Ը, 2-ում (զրաբար բնագրում՝ 3) և Մատթ. ԻԱ, 16-ում հունարեն բնագիրն օգտագործում է միևնույն առաջնություն: Ըստ կամպեի «A Patristic Greek Lexicon» բառարանի, հունարեն այդ բայն արտահայտում է հետևյալ իմաստները. հիմնադրել, հաստատել, հայրալիքել, պատրաստել, լրացնել, վերջացնել, կատարելագործել, ուժեղացնել: Նույն իմաստներն ենք տեսնում H. Liddell & R. Scott, «A Greek-English Lexicon»-ում: Նշանակում է առաջնություն ավելի հաստատել-ու իմաստ ունի, հետևաբար Եղիշեի օգտագործած հաստատեցեր-ը ավելի հարադատ է հունարեն բնագրին⁷: Անգամ եթե վերանանք հունարեն այդ բայի արտահայտած իմաստներին և հետևենք միայն հայերենին, կտեսնենք, որ տվյալ իրադրության իմաստը ավելի հակված է դեպի հաստատել-ը, քան կատարել-ը: Մանուկների ու ստրնդիացիների բերանով օրհնություն կատարել, թե՛ օրհնությունը հաստատել, թե՛ առաջին անգամ է, ուրեմն ավելի հարմար է կատարել բայը, իսկ եթե օրհնություն կատարելու սովորությունը, բարեգործությունը շարունակելու, ավանդություն դարձնելու մասին է խոսքը (մի բան, որ շատ ավելի հավանական է), ուրեմն գերադասելի է հաստատեցեր-ը: Բացի այդ. Սաղմոսարանի զրաբար թարգմանության մեջ խախտված են բայի դեմքն ու սեռը. առաջնություն սահմանական եղանակի անցյալ կատարյալ բայ է՝ դրված երկրորդ դեմքով, ճիշտ այնպես, ինչպես Եղիշեի մոտ է՝ հաստատեցեր, մինչդեռ զրաբար Սաղմոսարանում ունենք կրավորական երրորդ դեմքի բայ՝ կատարեսցի: Այստեղից էլ նախադասության՝ այդ բայերին հաջորդող անդամների տարբերությունը՝ մեկը (Եղիշեինը) ուղիղ խնդիր, իսկ մյուսը՝ ենթակա: Ինչ վերաբերում է եղծցի-եղծցին տարբերությանը, ապա հունարեն բնագրում այն դրված է եղական թվի երրորդ դեմքով՝ առաջնություն: Եղիշեի և Ս. Գրքի հրատարակություններում, հունարենի հետևողությամբ, ունենք եղծցի: Միայն 1805 թ. Զոհրաբյան հրատարակությունն է, որ նախընտրել է եղծցին:

Հունարեն բնագրի ἐνεχὰ τῶν ἱερῶν հատվածը զրաբար բնագիրը վերարտադրում է բառացի. «Վասն թշնամեաց քոց»: Եվ որպեսզի հստակություն մտցնի, ավելացրել է տե՛ր: Այս հատվածը նախորդից վերջակետով անջատելը (ինչպես վարվել են Ս. Գրքի 1666, 1705, 1733, 1805, 1817, 1860 թթ. հրատարակիչները) խաթարում է վերջակետին նախորդող և հաջորդող հատվածների շարահյուսական հարաբերությունը: Նրանք ոչ թե իրարից անկախ, տարբեր նախադասություններ են, այլ նույն նախադասության տարբեր անդամներ: Այս վրիպումը հավանաբար նկատել են Ս. Գրքի 1895 և

7 Ասորերեն բնագրի անգլերեն թարգմանության մեջ նույնպես ունենք established՝ հաստատեցեր (The Holy Bible):

1929 թթ. հրատարակիչները և վերջակետը փոխարինել են միջակետով⁸։ Երբ վերացնում ենք այս հատվածների միջև ընկած կետադրական նշանը և ճշտում հունարենի *ἐνεα-ի* ու գրաբար *վասն-ի* իմաստները, այդ դեպքում միայն հարթվում է նախադասության իմաստը։ Ամենայն հավանականությամբ բնագրի այս հատվածի անհարթ լինելն է, որ Եղիշեին ստիպել է «վասն թշնամիաց քոց, տէր» հատվածը զեղչել իր երկում։

Բ. Եղիշեի երկում վկայված են Առ փրկիպեցիս թղթի Բ, 8—10 տները։ Դրանց և վկայակոչումի մեջ կա երկու տարբերություն. ա. բնօրինակի «շնորհակց»-ը Եղիշեի երկում վերածվել է ետ-ի։ Սա գրչագրական մի քմահաճույթի կամ վրիպակի արդյունք չէ, այլ տարբեր թարգմանության առկայությունը հաստատող փաստ։ Մի փոքր տարբեր է վերոհիշյալ աղբյուրի առաջին մասը։ Նախ՝ դժվար է ասել, թե Եղիշեի յանձն չառ զհամբերութիւն-ը (110/5) լիեալ հնազանդ-ի՞ տարբերակն է, թե՞ դրան նախորդող խոնարհեցոյց զանձն-ի։ Երկու դեպքում էլ վկայակոչումը զգալիորեն հեռացել է բնօրինակից։ Բ. Կարծում ենք, որ և՛ գրաբար թարգմանությունը, և՛ վկայակոչումը ճիշտ չեն վերարտադրել հունարենի իմաստը. *ἐταπεινωσεν εαυτον ὑενόμενος ὑπὸ χροσ μέγας*։ *ἠαυτατος δὲ ταπεινός*։ Օգտագործված *ταπεινός* բառը բազմիմաստ է. այն կարող է նշանակել և՛ միևնչև, և՛ չափ։ Ըստ այդմ էլ այդ կապն ու կապական խնդիրը կարելի է ներկայացնել և՛ մահու չափ, և՛ միևնչև մահ։ Եթե նկատի ենք առնում այդ հատվածի իմաստը, ապա պիտի ընդունել, որ հեղինակն ուզում է ասել. այդ հնազանդությունը հարատևել է միևնչև մահ (և ոչ թե մահու չափ)⁹, մի բան, որ անտեսված է Եղիշեի երկում («Յանձն էառ զհամբերութիւն մահու եւ մահու խաչի») և հաստատվում է Տիմոթեոս 4-ուգի «Հակաճառության» մի հատվածով. «...եղեալ հաւան Հօր մինչ մահու, մահու իսկ խաչի»¹⁰։

Գ. Եղիշեի վկայակոչումների այս երրորդ խմբին պատկանող օրինակներում տեսնում ենք զգալի շեղումներ բնօրինակից։ Դա արդյունք է այն բանի, որ Եղիշեն իր շարադրանքի մեջ ձուլել է բնօրինակի նախադասությունը, հարմարեցրել իրեն հատուկ քերականական, կառուցվածքային, ոճական ձևերին ու բնույթին, ըստ անհրաժեշտության փոխել բնօրինակի նախադասությունների երանգները, հարաբերությունները և այլն։

Զի եթէ տնկակիցք եղաք նմանութեան մահու նորա, որչափ եւս առա- թեան մահու նորա, այլ եւ յարութեան լեւ լիցութ հաղորդք յարութեան նորա։ նորա լինիցիմք։ Առ հռովմայեցիս, 173/18 Զ, 5

Վկայակոչումը նույնությամբ կրկնում է աղբյուրի առաջին հատվածը («Զի եթէ տնկակիցք եղաք նմանութեան մահու նորա»), անգամ հրկուսի համար ընդհանուր է ոչ այնքան ճիշտ թարգմանված տնկակիցք բառը (սա հու-

⁸ Ի դեպ, հունարեն բնագրի *Լոնդոնի* (The Septuagint Version), *Միչիգանի* (The Septuagint Version of Old Testament, 1970) հրատարակությունները նույնպես ունեն միջակետ, իսկ Նոտողարտի 1971 թ. հրատարակությունում այդ հատվածը կետադրական որևէ նշան չունի։

⁹ Ռուերեն և ֆրանսերեն թարգմանություններն ունեն համապատասխանաբար «смирив себя быв послушным до смерти и смерти креста», „se rendant obeissant jusqu'à la mort“։

¹⁰ Զ. ր. Ա. Տ. ա. յ. ա. ն, Բանասիրական ուսումնասիրություններ, Երևան, 1976, էջ 63։

նարենի յսլափոփոխի բառապատճենումն է և ոչ թե թարգմանությունը), սակայն աղբյուրի երկրորդ հատվածի երանդը փոխված է: Աղբյուրն ունի նախադասությունների պայման-հետևանք հարաբերություն (եթե—ապա), մինչդեռ Եղիշեի մոտ «եթե—ապա առավել ևս» հարաբերող-հարաբերյալ բառերով ցույց է տրվում մի եզրի սաստկացումը, ուժգնությունը մյուսի նկատմամբ: Եվ դա արված է՝ ելնելով նկարագրվող վիճակի պահանջից. դեպի նահատակություն դնացող անձանց այլ կերպ չի կարելի ոգևորել, քան այնպես, ինչպես Եղիշեն է անում. «Զի եթէ տնկակիցք եղաք նմանութեան մահու նորա, որչափ եւս առաւել լիցուք հաղորդք յարութեան նորա»:

Ունենք մի օրինակ ևս, որտեղ Եղիշեն միջամուխ է լինում աղբյուրի նախադասության երկու եզրերի հարաբերության մեջ.

Ուր առաւել եղեն մեղքն, անդէն Ուր առաւել եղեն մեղքն, առաւել առաւելան շնորհքն Աստուծոյ: ևս յաւելան շնորհքն:

103/20

Առ հոռվմայեցիս, Ե, 20

Վկայակոչումի մեջ ունենք իրար հակադրվող նախադասություններ, որոնք համադր եւն ոչ միայն ըստ շարահյուսական հարաբերության, այլև՝ ըստ իմաստի. եզրերից ոչ մեկը մյուսի նկատմամբ գերակայություն չունի, այնինչ աղբյուրի մեջ երկրորդ նախադասությունը առաջինի համեմատությամբ սաստկացնում է արտահայտած մտքի բնույթը: Բացի այդ, Եղիշեն շեշտում է գործողության կատարման վայրը, իսկ աղբյուրը՝ գործողության աստիճանական զարգացումը: Հունարեն բնագիրն այդպիսի տարբերակումների համար հիմք չի տալիս. $\text{ὅς ὅτε ἐπλεόνασαν ἢ ἀμαρτία, ὑπερεπερίσσευσαν ἢ χάρη}$, ուր ոչ միայն ὅς հարաբերող բառին հարաբերյալ որևէ բառ չի տառգրվում, անգամ կասկածելի է, թե ὅς -ն ուր պիտի թարգմանե՞լ, թե՞ երբ: Գրաբար թարգմանության մեջ ոչ միայն ունենք ուր, այլև հունարեն բնագրի համեմատությամբ առաւել եւս բառերի հավելում: Երա փոխարեն Եղիշեն հունարենի ὅς -ն ուր թարգմանելով հանդերձ չի հակադրել նախադասության երկու եզրերը՝ դրանով իսկ հարադատ մնալով հունարեն բնագրին, ուստի և տարբերվելով գրաբար բնօրինակից:

Քանի որ Մատթեոս, Ժ, 33 և Ղուկաս, ԺԲ, 9 տները նույն միտքն են արտահայտում, ուստի Եղիշեն այս հատվածները վկայակոչելիս վերցրել է այն, ինչ ընդհանուր է իր աղբյուրների համար («Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց եւ ես զնա||ուրացեալ լիցի») և միմյանց ձուլել այն, ինչ տարբեր է երկու աղբյուրներում. Մատթեոսի «առաջի հօր իմոյ, որ յերկինս է» միավորին, որը բացակայում է երկրորդ աղբյուրում, ավելացրել է Ղուկասի «առաջի հրեշտակաց Աստուծոյ» միավորը, որը բացակայում է առաջին աղբյուրում: Մտացվել է իրար ձուլված և իրար լրացնող մի վկայակոչում՝ «Որ ուրասցի զիս առաջի մարդկան, յուրաստ եղէց եւ ես զնմանէ առաջի հօր իմոյ, որ յերկինս է եւ հրեշտակաց սրբոց» (55/2): Եղիշեի վկայակոչումի դումարելիները պարզ են, բայց որտեղի՞ց է դալիս ուրանալ և յուրաստ լինել տարբեր բայաձևերի օգտագործումը: Մատթեոս, Ժ, 33-ում կրկնված է ուրասալ բայը՝ ուրասցի-ուրացայց, հետևելով, անշուշտ, հունարեն բնագրին (ἀρνήσεσθαι — ἀρνήσασθαι): Քիչ այլ է Ղուկաս ԺԲ, 9, ուր ունենք ուրացի-ուրացեալ լիցի:

ուայ, որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ ևւ ոչ պատրաստեսցի ըստ կամաց նո-
րա, արբցէ զան բազում: Եւ որ ոչն գիտիցէ, ևւ արժանի զանի ինչ գործիցէ,
արբցէ զան սակաւ» նախադասության:

Աղբյուրի համեմատությամբ մեծ փոփոխություններ կան Եղիշեի երկի 11/8 վկայակոչումի մեջ. «Ծառայք, հպատակ լերուք տերանց ձերոց մարմ-
նաւորաց: Մի սուտակասպասք ևւ առաջս աշառելով, այլ սրտի մտօք ծառա-
յնցէք իբրեւ Աստուծոյ ևւ մի իբրեւ մարդկան, քանզի ի տեառնէ է հատու-
ցումն արդար վաստակոց ձերոց»: Աղբյուրների (Առ կողոսացիս, Գ, 22—24, Առ եփեսացիս, Զ, 5—7) «ահիւ եւ զողութեամբ եւ միամտութեամբ սրտից ձերոց որպէս Քրիստոսի», «իբրեւ ծառայք Քրիստոսի առնել զկամս Աստու-
ծոյ» միամտութեամբ սրտի երկնչել ի տեառնէ, զոր ինչ առնիցէք», «զիտաս-
չիք» հատվածները իսպառ բացակայում են վկայակոչումի մեջ¹¹: Ամբողջու-
թյամբ այլափոխված է «Մի առ ականէ»¹² ծառայութեամբ» արտահայտությու-
նը: Եղիշեի մոտ այն դարձել է «Մի սուտակասպասք եւ առ աշս աշառելով»: Առ կողոսացիս թղթի «Ի տեառնէ առնուցուք զհատուցումն ժառանգութեան
ձերոյ, քանզի տեառն Քրիստոսի ծառայէք» հատվածը Եղիշեի մոտ այսպես է. «Ի տեառնէ է հատուցումն արդար վաստակոց ձերոց»: Այլիմաստ են հնա-
զանդ-հայատակ, յամենայնի-մարմնաւորաց, գործեսչի-ծառայեցէք, տեառն-
Աստուծոյ:

Առաջին իսկ նախադասությունը հուշում է, որ այդ հատվածի հայերեն
թարգմանության երկու տարբերակները (զրաբար և Եղիշեի) իրար լրացնե-
լուց հետո են ծածկում հունարեն բնագիրը.

Հունարեն	Գրաբար	Եղիշե
Ծառաներ, հնա- զանդվեք ամեն ին- չում ձեր մարմնավոր տերերին:	Ծառայք, հնազանդ լերուք տերանց ձերոց յամենայնի:	Ծառայք, հպատակ լերուք տերանց ձերոց մարմնաւորաց:

Հունարեն բնագրի κατὰ πᾶσαν τὴν κατὰ σάρκα κοίτην (յամենայնի
տերանց ձերոց մարմնաւորաց) հատվածի յամենայնի-ն տեղ է գտել
միայն զրաբար թարգմանության մեջ, իսկ տերանց ձերոց մարմնաւորաց-ը՝
միայն Եղիշեի վկայակոչումի մեջ (հիշենք, որ Առ եփեսացիս գրված թղթում
էլ կա միայն տերանց ձերոց մարմնաւորաց): Եղիշեի սուտակասպասք-ը հու-
նարենի ἀνὸς τοῦ σώματος-ի համարժեքն է, որի հայերեն բառացի թարգմա-

¹¹ Եղիշեի վկայակոչումն ավելի մոտ է կանգնած Առ եփեսացիս գրված թղթին, քան՝ Առ
կողոսացիս. առաջին երկուսի համար ընդհանուր են մարմնաւորաց, ծառայել, մի իբրեւ բա-
ռերը, այնինչ Առ կողոսացիս-ը, զրանց փոխարին, ունի համապատասխանաբար յամենայնի,
զիտասչիւք, ոչ իբրեւ: Բայց քանի որ «ահիւ եւ զողութեամբ եւ միամտութեամբ սրտից ձերոց
որպէս եւ Քրիստոսի» (Առ եփեսացիս) հատվածը բացակայում է Առ կողոսացիսում և Եղիշեի
վկայակոչումի մեջ, ուստի պիտի ընդունել, որ Եղիշեի համար հիմնական աղբյուր են եղել
Առ կողոսացիս թղթի Գ, 22—24 տները:

¹² Այս բառը Առ կողոսացիս թղթում (Զոհրաբյան հրատարակություն) ներկայացված է
լրիւ մեկ բառ՝ առական, որը սխալ է: Այս սխալը անցել է նաև Եղիշեի բնական հրատա-
րակութւան մեջ՝ առաջս ձեռով: Այն պարզապես երկու բառից է բաղկացած (առ աշս). հետե-
ւաբար առանձին պիտի գրվի, ինչպես և առանձին պիտի գրվի առականէ՝ ինչպես օգտագործ-
ված է Առ եփեսացիս թղթում:

նությունը կլինեն մարդահանոյ (Առ կողոսացիսն ունի առ ականէ): Նշանակում է, Եղիշեն ոչ միայն չի հետևել հունարեն բնագրի գրաբար թարգմանությունը, այլև հունարեն բնօրինակին մոտեցել է բոլորովին ուրույն, որից և հունարեն բնօրինակի Եղիշեի թարգմանությունը ստացել է այլ տեսք ու իմաստ: Հունարենի $\mu\epsilon\lambda\acute{\iota}$ $\epsilon\nu$ $\delta\epsilon\psi\acute{\iota}\alpha\lambda\lambda\iota\sigma\theta\epsilon\upsilon\alpha\iota$: $\alpha\iota\varsigma$ $\omega\varsigma$ $\alpha\nu\theta\epsilon\omega\pi\alpha\rho\epsilon\varsigma\tau\eta\varsigma$ -ը չունի համազոր երկու անդամ՝ միացած $\kappa\alpha\iota$ (և) շաղկապով, այլ ունի լրացում-լրացյալ՝ մասնական բացահայտիչ, ի դեմս $\omega\varsigma$ $\alpha\nu\theta\epsilon\omega\pi\alpha\rho\epsilon\varsigma\tau\eta\varsigma$ -ի (որպես մարդահանոյ):

Եվս մեկ տարբերություն. վերոհիշյալ վկայակոչումի վերջին մասը բնօրինակների համեմատությամբ բոլորովին ազատ շարադրանք է. հունարեն և գրաբար «Գիտասջիբ, զի ի տեառն է առնուցուք զհատուցումն ժառանգութեան ձերոյ. քանզի տեառն Քրիստոսի ծառայէք»¹³ հատվածի փոխարեն Եղիշեն ունի «Քանզի ի տեառն է հատուցումն արդար վաստակոց ձերոց»:

Մատթեոս, ԺԲ, 25-ից, Մարկոս, Գ, 24—25-ից և Ղուկաս, ԺԱ, 17-ից կատարված երեք քաղվածքների միաձուլման արդյունք է Եղիշեի «Ամենայն տուն եւ թագաւորութիւն, որ յանձն իւր բաժանի, ոչ կարէ կալ հաստատուն» (8/14) վկայակոչումը: Նշված երեք աղբյուրներից ոչ մեկը նման չէ մյուսին: Եղիշեի վկայակոչումն իր հերթին նման չէ իր աղբյուրներից և ոչ մեկին. այն, ինչ աղբյուրներում ներկայացվում է առանձին, համազոր նախադասություններով, Եղիշեի մոտ միաձուլվում է, և առադրվող իրողությունները ներկայացվում են ոչ թե համազոր նախադասություններով, այլ նախադասություն համազոր անդամներով՝ ենթականերով («Ամենայն տուն եւ թագաւորութիւն»): Մի կողմ թողնենք մասնակի տարբերությունները և տեսնենք, թե վկայակոչումն ինչ տարբերություններ ունի ընդհանրապես աղբյուրների հետ համեմատած: Մատթեոսի և Ղուկասի դերբայական դարձվածը («բաժանեալ յանձն իւր») վկայակոչումի մեջ արտահայտված է որոշիչ ստորադաս նախադասությամբ («որ յանձն իւր բաժանի») և այս առումով նման է Մարկոս, Դ, 24-ին, թեև վերջինս ու վկայակոչումը որդեգրել են բայի տարբեր ժամանակներ (բաժանեացի-բաժանի): Բացատրելի է, թե ինչու երեք աղբյուրներում ստորոգյալները դրված են եզակի թվով՝ նախադասությունների ենթակաները եզակի են ու միանգամ (քաղաւորութիւն, քաղաք կամ տուն): Բայց ինչու են եզակի Եղիշեի վկայակոչումի ստորոգյալները (բաժանի, ոչ կարէ), երբ նախադասության ենթական բազմակի է (տուն և քաղաւորութիւն) և, դրան գումարած, ենթական ունի ամենայն որոշյալ դերանվամբ արտահայտված որոշիչ, որի դեպքում ստորոգյալը սովորաբար դրվում է հոգնակի, եթե անգամ ենթական եզակի թվով է ու միանգամ: Բանն այն է, որ Եղիշեի մոտ աղբյուրների տարբեր նախադասությունների կառուցվածքն ու հերթականությունը մնացել են անփոփոխ, իսկ երկրորդ նախադասության ենթական պարզապես առադրվել է առաջին նախադասության ենթակայի մոտ: Եղիշեն, կատարելով այդ փոփոխությունը, չի անդրադարձել, որ պիտի փոխվեր նաև ստորոգյալների թիվը:

Եսայիի Մարգարեության Թ, 20 «Այլ խոտորեսցի յաջակողմն իւր առ քաղցի եւ կերիցէ զձախակողմնն իւր» քաղվածքը շեղվում է հունարեն բնօրինակից: Ըստ հունարեն բնագրի, «առ քաղցի» ուտելու գործողությունն անց-

¹³ Հունարենում բացակայում են ձերոյ և քանզի բառերը, ինչպես և The Holy Bible-ում և La Sainte Bible-ում, Библия-ում կա միայն ոճո:

նում է ձեռնին, բազկին, բայց ոչ մաբմնի ձախ կեսին: Որ խոսքը վերաբերում է քնին, ձեռնին, երևում է ոչ միայն այն բանից, որ հունարեն աղբյուրում նշվում է ձեռն (ընդհանրապես՝ աջ թև, աջ ձեռք) կամ *αριστερον, αριστερα* բնագրի հաջորդ տողերից¹⁴, եվ եթե այս կամ այն չափով մութ է մնում հարցը գրաբար բնագրում (աջակողմն և ձախակողմն բառերը, իրոք, ընդհանուր են և չեն մատնանշում մաբմն կամ քն), ասյա Եղիշեի վկայակոչումի մեջ այն շատ որոշակի է. «Այր, ասի, առ քաղցի իւրում շրջեսցի եւ կերիցէ զկէս անձին իւրոյ» (8/13), մի բան, որ չի բխում ոչ հունարեն, ոչ էլ հայերեն բնագրերից¹⁵:

Արծարծվող հարցի տեսակետից խիստ կարևոր են միևնույն աղբյուրի կրկնակի վկայակոչումները միևնույն երկում կամ նույն հեղինակի տարբեր երկերում: Դրանք ցույց կտան, թե աղբյուրի վկայակոչող հեղինակները բնօրինակից քաղվածքների կատարելիս ի՞նչ սկզբունք են ունեցել. արդյո՞ք պարտավորված են եղել քաղվածքը հարազատությամբ վերցնել, թե՞ հանգամանքներից ելնելով ձևափոխել են նախադասությունները, դրանց հարաբերությունն ու իմաստը, հակառակ այն պնդման, թե «հիշողությամբ վկայակոչել աստվածաշնչական բնագիրը չէր թույլատրվում»¹⁶:

Ունենք այսպիսի շորս օրինակ: Դրանցից երեքը կրկնվում են «Վասն Վարդանայ...» երկում, իսկ չորրորդը գտնվում է «Վասն Վարդանայ...» և նույն հեղինակի «Արարածոց մեկնութիւն» երկերում¹⁷:

ա. ... եւ եղ հիմն ի վերայ վիմի. ի յառնել հեղեղաց՝ բախեաց գետ զտունն եւ ոչ կարաց շարժել գնա, զի հաստատեալ էր հիմնն ի վերայ վիմի: Ղուկաս 2, 48

Հիմունք նորա եղեալ են ի վերայ հաստատուն վիմի. ոչ ներքինք շարժել կարեն, եւ ոչ վերինք դրդուեցուցանել: 47/8

... հիմունք սորա հաստատութեամբ եղեալ են ի վերայ վիմին անշարժութեան. ոչ ի վերայ երկրի, այլ ի վեր յերկինս: 103/2

բ. Վկայ են մեզ երկինք եւ երկիր, զի ի դուր տարապարտուց կորուսանէք զմեզ: Ա Մակ. Բ, 37

Վկայ են մեզ երկինք եւ երկիր... ի գուր եւ անողորմ են հարուածքս ի վերայ մեր: 19/19

Վկայեն մեզ երկինք երկնաւորօք եւ երկիր երկրաւորօք: 87/18

գ. Ես եմ տէր Աստուած քո՝ Աստուած նախանձոտ, որ հա-

Աստուած նախանձոտ է. վասն թղոյ միոյ ուտելոյ ի ծա-

Աստուած նախանձոտ եմ ես, հատուցանեմ զմեզս հարց

¹⁴ Ասորերեն բնագրում (ըստ The Holy Bible-ի) պարզ ու մեկին գրված է. «...ձախ ձեռք»:

¹⁵ Այսպիսի շեղումներ տե՛ս նաև Եղիշեի 57/1, 76/4, 86/22, 106/23, 109/18, 134/20, որոնց աղբյուրներն են Սաղմոս, 4Ը, 27, Սաղմոս, 1Դ, 1—2, Սիրաք, ԺԴ, 5, Ամովս, Ե, 8, Բ, 6, Եսայի, ԽԲ, 8, ԽԸ, 11—12 և Հուդա, 4:

¹⁶ Ի. В. Виноникоу, Самаритянское Пятикнижие и устная палестинская традиция («Палестинский сборник», 15(18), 1966, էջ 176):

¹⁷ Տե՛ս Լ. Խաչիկյան, Եղիշեի «Արարածոց մեկնութիւն» աշխատությունը (անտիպ):

տուցանեմ զմեղս հա-
րանց՝ որդւոց, յերիս
եւ ի շորս ազգս ատե-
լեաց իմոց եւ առնեմ
զորդորմութիւն ի հա-
զար ազգս սիրելեաց
իմոց, եւ ոչք պահեն
զհրամանս իմ:

Ելբ, Ի, 5—6

դ. Եւ ասաց Աստու-
ած. Եղիցի լոյս, եւ
եղեւ լոյս:

Ծնունդք, Ա, 3

ուոյն Աստուած զմահ
արար եւ զմարդն էարկ
ընդ այնու պատու-
հասի:

25/18

յորդիս մինչեւ յեթն
դար: 56/12

Աստուած, որ ասաց
ի խաւարի լոյս ծա-
ղել, որ եւ ծագեց եւ
լուսաւորեաց իմաստու-
թեամբ զաներեւոյթ
արարածս: 148/21

Եւ ասաց Աստուած.
Եղիցի լոյս, եւ եղեւ
լոյս:

Մաշտոցի անվ. Մա-
տենադարան, ձեռ. №
1267, թ. 8ա:

Առաջին երեք հատվածներից և ոչ մեկը նման չէ մյուսին: Եղիշեի երկու վկայակոչումների մեջ բացակայում է աղբյուրի «դի հաստատեալ էր հիմնն ի վերայ վիմի» հատվածը, քանի որ աղբյուրի բերված հատվածի առաջին մասի («եւ եդ հիմն ի վերայ վիմի») մոտավոր կրկնությունն է և ավելորդ է համարվել: Իրարից տարբերվում են այն հատվածները, ուր խոսվում է վեմի վրա հիմք դնելու մասին. եղեղեալ ենեղեալ են, հիմնեհիմնեհիմնեհիմնեհ. —||նորա||սորա, —||հաստատուն||անշարժութեան, —||—||հաստատութեամբ: Բացի այդ, աղբյուրի «ի յառնել հեղեղաց բախեաց գետ դտունն եւ ոչ կարաց շարժել դնա» հատվածը մի վկայակոչումի մեջ ստացել է «ոչ ներքինք շար-ճել կարեն, եւ ոչ վերինք դրդունցունել», իսկ մյուսի մեջ՝ «ոչ ի վերայ երկրի, այլ ի վեր յերկինս» տեսքը: Քննության առարկա երկու վկայակոչում-ների և նրանց աղբյուրի միջև եղած տարբերությունները մի կողմից, և երկու վկայակոչումների՝ միմյանց միջև եղած տարբերությունները մյուս կողմից այն համոզման են բերում, որ այդ վկայակոչումները, Ղուկասի հատվածներն իբրև աղբյուր ունենալով հանդերձ՝ դրանց անմիջական քաղվածքները չեն: Իհեև առկա են նորա||սորա, հաստատուն վիմի||վիմին անշարժութեան տար-բերությունները, բայց և հենց դրանցով էլ մերձենում են իրար այդ վկայակոչ-ումները, որովհետև հենց այդ տարբերվող բառերը չկան աղբյուրի մեջ, բայց կան երկու վկայակոչումներում:

Երկրորդ օրինակում Ա Մակաբայեցվոց գրքի Բ, 37-րդ տան և Եղիշեի երկու կատարված վկայակոչումի «Վկայ են մեզ երկինք» հատվածները ծածկում են իրար: Եղիշեի վկայակոչումի և աղբյուրի նույնականությունն այսքանով ավարտվում է: Հաջորդ՝ «...ի դուր եւ անողորմ են հարուածքս ի վերայ մեր» նախադասությունն զգալիորեն խոտորվել է աղբյուրից: Ընդ որում հունարեն և գրաբար բնագրերը նույնպես չեն համապատասխանում իրար. «...αὐτῶν ἀπολλύσε ἡμεῖς» (որ անկարգ||առանց մտածելու ոչնչաց-րեցիր մեզ): Աղբյուրը նախադասության համապատասխաններ չունի, այնինչ վկայակոչումի մեջ Եղիշեն օգտագործում է «ի դուր եւ անողորմ» անդամները՝ հունարենի αὐτῶν-ի (անկարգ, առանց մտածելու) փոխարեն, իսկ գրա-բար բնագիրն ունի «ի դուր տարապարտուց»: Հունարենի αὐτῶν-ը երկու

տարբեր թարգմանությունների մեջ արտահայտվել է երկու բառերով. Աստվածաշնչում իրար լրացնող համիմաստ բառերով՝ «ի զուր տարապարտուց», իսկ Եղիշեի մոտ՝ այդ միավորների մեջ դրվել է եւ, իսկ տառապարտուց-ը փոխարինվել է անողորմ-ով: Եթե սրանց զուգարենք և այն, որ գրաբար կո-րուսանէլ գմեզ-ի փոխարեն Նղիշեի մոտ հանդես է գալիս «Են հարուածքս ի վերայ մեր», ապա պարզ կերևա, թե որքան մեծ տարբերություն կա հու-նարեն մի աղբյուրի երկու թարգմանությունների միջև:

Կարևոր է երրորդ օրինակի երկրորդ վկայակոչումը: 25/18-ում բերված վկայակոչումի միայն առաջին հատվածը ընդհանրություն ունի Ելքի հետ («Ես եմ տէր Աստուած քո՝ Աստուած նախանձոտ»), որը Եղիշեի մոտ վերած-վել է «Աստուած նախանձոտ է»-ի: Երկրորդ վկայակոչումը ավելի մոտ է կանգնած աղբյուրին. պահպանված են և՛ բառերը, և՛ շարադասությունը, և՛ բայական ժամանակն ու դեմքը: Այստեղ, սակայն, կա արմատական երկու տարբերություն. ա. աղբյուրի «յերիս և ի շորս»-ը «գումարվել է» և վկայա-կոչումի մեջ արտահայտվել «չեթն»-ով, բ. աղբյուրի ազգս-ը վերածվել է դար-ի: Եվ դա ունի իր հիմնավոր պատճառը: Հին հունարենի γένος-ը բազ-միմաստ է և կարող է նշանակել, ի թիվս այլ իմաստների, սերունդ, ծագում, ցեղ, տեսակ, շառավիղ, հետևորդ, ծագումնաբանություն, սեռ, դաս, որդի, արտադրանք, նաև ազգ և դար (նույնը վերաբերում է γένος-ին): Հենց այս վերջին երկու իմաստներն էլ տեսնում ենք Ելքի գրաբար բնագրում (ազգս) և Եղիշեի վկայակոչումի մեջ (դար):

Այսպիսով, Եղիշեի «Վասն Վարդանայ...» երկի վկայակոչումները թույլ են տալիս անելու հետևյալ ենթադրությունները.

1. Եղիշեի երկի գրության շրջանում Աստվածաշնչի բոլոր գրքերի գրա-բար թարգմանությունը թերևս ավարտված չի եղել կամ վերջնական, կանո-նացված տեսք չի ստացել¹⁸:

2. Հայերեն Աստվածաշնչի հատվածների ու Եղիշեի վկայակոչումների տարբերությունը բխում է նրա ժամանակ ավարտուն թարգմանության բա-ցակայությունից:

3. Եղիշեն ինքն է հաճախ թարգմանել իր վկայակոչած հատվածները, կամ էլ, որ բոլորովին անհավանական չէ, օգտագործել է Աստվածաշնչի տար-բեր գրքերի մի թարգմանություն, որ մեզ չի հասել¹⁹:

4. Թերևս իրական հիմք ունի Տեր-Մկրտչյանի և Աճառյանի այն պնդումը, թե Ս. Գրքի թարգմանությունն ունեցել է ոչ թե երկու, այլ երեք շրջան²⁰:

Աստվածաշնչի գրաբար թարգմանության ավարտուն կամ բնագրի օրի-նականացված լինելու մասին վերջնական խոսք կարող է լինել միայն այն դեպքում, երբ բնութիւյան կառնվեն V դարի բոլոր հայ գործիչների երկերի վկայակոչումները:

18 Տե՛ս այդ մասին Ելնիկ Կողբացու վկայակոչումը, որտեղ նա «Ծնունդը» գրքից բազ-ված մի հատվածի մասին դատողություններ անելիս հենվում է երբայական, հունական և ասո-րական, բայց ոչ գրաբար բնագրի վրա («Եղծ աղանդոց», Վենետիկ, 1826, էջ 260—261), ինչպես նաև Մ. Տեր-Մովսիսյանի եզրակացությունը. «...թարգմանական ողջ աշխատանքը չվերագրել միայն V դարի թարգմանիչներին» (Մ. Тер-Мовсесян, История пере-вода Библии..., С. Петербург, 1902, էջ V):

19 Տե՛ս Լ. Ռ ա շ ի կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 101, 218, 219:

20 Տե՛ս Հ. ր. Ա ճ ա ռ յ ա ն, Բանասիրական ուսումնասիրություններ, էջ 40:

АНАЛИЗ ССЫЛОК В КНИГЕ ЕГИШЕ
«О ВАРДАНЕ И АРМЯНСКОЙ ВОЙНЕ»

Кандидат филол. наук А. С. ЗЕИТУНЯН

(Резюме)

Исследователь переводной армянской литературы V в. может почерпнуть богатый и ценный материал из ссылок на Библию, сохранившихся в сочинениях древнеармянских историков. В статье исследуются разбросанные в труде «О Вардане...» Егише ссылки, часть которых расходится то с древнеармянским библейским текстом, то с древнегреческим, то с ними обонии. Сравнение ссылок с древнегреческим (Септуагинта), древнесирийским (Пешитта) и древнеармянскими текстами выявляет истоки этих разногласий. Исследуемые ссылки дают возможность сделать предположительные выводы о том, что перевод Библии с древнегреческого на древнеармянский не был завершен в V в., ибо Егише сам перевел необходимые ему отрывки или воспользовался переводом, не дошедшим до нас.